ՆՅՈՒԹԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վերջին տարիներին Երևանի թանգարաններում հայտնաբերված անտիպ նամակներն ու պաշտոնական գրությունները նոր փաստերով հարստացնում են Հովհաննես Թումանյանի գիտական կենսագրությունն ու կյանքի տարեգրությունը։ Հոդվածի նպատակն է ընթերցողին ծանոթացնել վերոհիշյալ նյութերից մի քանիսին։

Հայտնի է, որ 1912 թ. հոկտեմբերին Հովհաննես Թումանյանի, Լեոյի, Երվանդ Լալայանի և այլ մտավորականների ջանքերով Թիֆլիսում հիմնադրվում է Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որի վարչության նախագահ է ընտրվում Թումանյանը՝ մնալով այդ գործի անփոփոխ ղեկավարը մինչև իր կյանքի վերջը։

Ընկերության՝ դեկտեմբերի 9-ի ընդհանուր ժողովի օրակարգի հարցերից մեկը նոր վախճանված Ավետիք Արասխանյանի անունով գրական ֆոնդ ստեղծելն էր, որի առթիվ ելույթ է ունենում վարչության նախագահը։ Գնահատելով Արասխանյանի նշանակալից դերը հայ մշակույթի, հասարակական մտքի պատմության մեջ, Թումանյանը հիմնավորում է վարչության և իր առաջարկությունը՝ նոր ստեղծվող ֆոնդի միջոցներով ամենից առաջ հրատարակել Արասխանյանին նվիրված մի ժողովածու, որը պետք է ընդգրկեր նրա կենսագրությունը, «լուսաբանություններ նրա գրական, գիտական, հասարակական գործունեության, ինչպես և իր անտիպ գործերից» (Թումանյանի վկայությամբ՝ Արասխանյանը առաջինն էր, որ մտահոգվեց հայ գրական ընկերություն հիմնելու խնդրով)։ Չնայած բուռն վիճաբանություններին և թեր ու դեմ կարծիքներին, Թումանյանի առաջարկն անցնում է, բայց նրա ջերմ ցանկությունը և որոշումը մնում են ընկերության ժողովի արձանագրության մեջ։ Արասխանյանին նվիրված ժողովածուն չի հրատարակվում։

Ի՞նչ առնչություն ունի գրական ընկերություն հիմնելու մասին Արասխանյանի այդ մտահոգությունը Թումանյանի հետ։

1892 թ. հունիսի 24-ին Թումանյանի՝ իր պատանեկության տարիների ընկերոջը՝ Անուշավան Աբովյանին գրած մի անտիպ նամակից տեղեկանում ենք և՛ Արասխանյանի չիրականացված նախաձեռնության, և՛ Թումանյանի մասնակցության մասին[2]։

«Իմացած կըլիս էլի, որ հայոց լուսավորիչների՝ գրողների, ապահովության համար ընկերություն է կազմվում՝ ֆոնդ են հիմնում։ Նախապատրաս-

---

1 *«Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1912, № 274, «Տեղեկագիր հայ գրողների կովկասյան ընկերության», Թիֆլիս, 1914, էջ 7, 11, 39—45։*

2 *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հայ հեղինակներին վերաբերող հուշերի ֆոնդ, Անուշավան Աբովյան, Իմ հուշատետրը, 1920, էջ 127 (նամակը արտագրված է հասցեատիրոջ ձեռքով, ինքնագիրը մեզ անհայտ է)։*

տական ժողովն եղավ արդեն, ես էլ... քարտուղար էի ընդհանուր ժողովի։

Սրա մասին եղնա շատ կխոսանք, երբ որ խելքս գլուխս կգա։

Միտդ ա գալի՞ս, չէ՞ մենք վաղուց շատ ենք ասել իրար էս բանի մասին»[3]։

Անշուշտ, Թումանյանի և Աբովյանի զրույցները գրողների ապահովության ֆոնդի մասին եղել են ամենաուշը 1888—1890 թթ. միջև, քանի որ Աբովյանը 1890-ի գարնանը առևտրական գործերով մեկնել է Կամենեց-Պոդոլսկ, որտեղ մնացել է 2—3 տարի։ Ուրեմն, տակավին բանաստեղծությունների առաջին գիրքը լույս աշխարհ չեկած, Թումանյանը, վստահ, որ ունի գրողի կոչում, մտածել է գրողների ապահովության, նրանց՝ ստեղծագործական աշխատանքով ապրելու մասին։

«Մուրճ» ամսագրի լուրերից իմանում ենք նաև, որ գրագետներին օգնելու այդ ընկերության առաջին նախապատրաստական ընդհանուր ժողովը տեղի է ունեցել Թիֆլիսում 1892 թ. հունիսի 7-ին (նամակը գրելուց 17 օր առաջ)։ Նույն թվականի ապրիլի 8-ին նշվել է բանաստեղծ Սմբատ Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 30-ամյա հոբելյանը։ Պարզվում է, որ նախապես որոշված էր հոբելյանի ժամանակ հավաքված գումարը հիմք դարձնելով, ստեղծել գրական ֆոնդ[4]։ Արասխանյանը խորհրդակցելով Շահազիզի հետ, կազմակերպել է հիշյալ ֆոնդի հիմնադիր ժողով, որին մասնակցել են 75 հոգի, այդ թվում և երիտասարդ բանաստեղծ Հովհ. Թումանյանը։ Ժողովականները միաձայն նշում են գրական ֆոնդ ստեղծելու անհրաժեշտությունը և ժողովի նախագահ ընտրում Ա. Արասխանյանին, քարտուղար՝ Հովհ. Թումանյանին[5]։ Արասխանյանը ներկաներին ծանոթացնում է ռուս գրողներին օգնող ընկերության 1859 թ. կանոնադրության գլխավոր կետերի հետ։ Ընտրվում է հատուկ մասնաժողով ընկերության կանոնադրությունը մշակելու համար։

Թեպետ հիշյալ նամակում Թումանյանը գրում է, թե՝ «Սրա մասին եղնա շատ կխոսանք, երբ որ խելքս գլուխս կգա», իսկ երկու օր անց գրած տողերում կրկնում՝ «Գրագետներին օգնելու ֆոնդի մասին հետո կգրեմ», բայց հաջորդ նամակներում այդ մասին որևէ ակնարկ չկա։

Թե ինչ մեծ հույսեր էր կապում Թումանյանը այդ ընկերության հետ, ցույց են տալիս նրա նամակի հետևյալ խոսքերը. «Նշաններից երևում է, որ մեծ ընկերություն կդառնա»։ Որպեսզի ընկերը ևս մաս ունենա այդ ֆոնդից, բանաստեղծը նրան էլ խորհուրդ է տալիս. «Թեզ արա մի զադ գրի, մտի ցուցակի մեջ»։

Հետաքրքրական է նույն անտիպ նամակում Թումանյանի պատմած հետևյալ միջադեպը, որը ցույց է տալիս, թե ի՞նչ ազդեցություն է ունեցել դրական ֆոնդ ստեղծելու մասին «Մուրճում» տպված հաղորդումը. «Ժողովի մյուս օրը իրիկունը գնում եմ այգին. մի սեղանից տղերքը հարցնում են, թե ո՞ւր ես գնում։

— Մի գրագետի պետք է 50 ռուբլի տամ, ասեցի, տանըմ էմ տամ։ Ով որ ինձ ճանաչում էր՝ հասկացան. մինը կար, որ հատկապես հարցնում էր, գիմնազիայումն էլ վարժապետ ա, ոչ բարով, գժվեց, որ էս իմացավ։

3 ԳԱԹ, Անուշավան Աբովյան, Իմ հուշատետրը, էջ 127։
4 «Մուրճ», 1892, № 4, էջ 657, № 5, էջ 844։
5 Նույն տեղում, № 5, էջ 884։

— Ո՞րտեղից էս տանում, ո՞ւր էս տանում, ո՞ւմ, ի՞նչ իրավունքով...,— ես բոլորովին հանգիստ շարունակում եմ.

— Ինչո՞ւ ես բարկանում, եղբայր, հարկավոր ա, պետք է տալ. այ, ես էլ 25 ռուբլի վերցրի...

— Ահրմ ո՞ւմնից,— կատաղած գոչում է մեր ուսումնական լիտերատորը,— ո՞վ է տալիս...

— Մեկին խոստացել են գանձապետ ընտրել, թե որ ընկերությունը հաստատվի, նա ավանսով տալիս է,—«պատասխանեցի ես և հեռացա փողը տանելու։— Я завтра статью напишу,— գոռում է ետևիցս,— դեռ ֆոնդը չհիմնած ուտում եք փողերը... Եվ առաջին սեղանը դողում էր՝ պիվի բաժակներն ու շշերը զնգզնգացնելով»[6]։

Բանաստեղծը ձեռքի գումարը անկասկած տանում էր վճարելու որևէ մեկից վերցրած պարտքը, բայց ահա հումորի զգացողությունը նրան մղել է ստեղծելու զվարճալի այդ տեսարանը։

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ հետո, որքանո՞վ Արասխանյանը կարողացավ արդարացնել գրական ֆոնդով շահագրգռված մտավորականների, այդ թվում և Թումանյանի հույսերը։

1893 թ. «Մուրճի» հոկտեմբերյան համարը աղդարարում է, թե հիմնադիր ժողովում ընտրված մասնաժողովը մշակել է «Հայոց գրականության ֆոնդի կանոնադրության ծրագիրը» և խոստանում է շուտով հրավիրել երկրորդ ժողովը։

Թումանյանի թղթերում պահվում է նաև 1894 թ. հոկտեմբերի 1-ին Արասխանյանի գրած հետևյալ երկտողը, որով նա խնդրում է արտագրել երկու տարի առաջ տեղի ունեցած ժողովի արձանագրությունները «...մինչև Ձեզ քարտուղար ընտրելը, և ընտրության հետևանքներն ու նիստի վերջը» և սեվագրությունների հետ ուղարկել իրեն, նախքան հոկտեմբերի 2-ին տեղի ունենալիք ժողովը[7]։

Երկրորդ ժողովի ձգձգման պատճառը Արասխանյանը բացատրել է Արծրունու թաղման հետ կապված ոստիկանական խստություններով, որի պայմաններում «անխոհեմություն էր բազմամարդ ժողով կայացնելու մասին մտածել»։

Թերևս այդ ձգձգումների պատճառով է, որ 1893 թ. Շահազիզը և Աղայանը մտադրվում են խորհրդակցել Արասխանյանի հետ՝ ստեղծվելիք ֆոնդը հանձնելու Կովկասի հայոց բարեգործական ընկերության տնօրինությանը, սակայն այդ ժամանակ դա տեղի չի ունեցել[8]։

Հոկտեմբերի 2-ի ժողովում Թումանյանը կարդում է իր կազմած արձանագրությունը և դրանով ավարտում իր դերը այդ գործում։ Մոտ մեկ տարի առաջ վիրավորված հեռանալով «Մուրճից», նա խզել էր կապերը Արասխանյանի հետ, ուստի հիշյալ ժողովից հետո նրանց համագործակցությունն այլևս

---

6 ԴԱԹ, Անուշավան Արովյան, Իմ հուշատետրը, էջ 127։

7 ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ (լր. ց.), № 262 (3)։

8 «Մուրճ», 1894, № 9, էջ 1337—1339։ «Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», կազմեց և ծանոթագրեց՝ Ա. Ս. Ասատրյան, Երևան, 1967, էջ 60—61։

անհնարին էր. քարտուղար ընտրվում է Վրթանես Փափազյանը[9]։ Ժողովը հաստատում է դրական ֆոնդի մշակված կանոնադրությունը և որոշում այն հանձնել պաշտոնական հաստատման, սակայն կառավարությունը մերժում է, և ֆոնդ չի ստեղծվում[10]։

1896 թ. հարց է բարձրանում ստեղծելու «Կովկասյան գրողների ապահովության ֆոնդ»։ Քանի որ այդ գործի նախաձեռնողը Թիֆլիսում հրատարակվող «Кавказ» թերթն էր՝ հայտնի իր հետադիմական հայացքներով և հատկապես հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, Թումանյանը չէր հավատում գործի հաջողությանը[11]։

Շահազիզի հոբելյանի ժամանակ կուտակված վերոհիշյալ գումարով 1898 թ. ստեղծվում է «Աբովյան—Նազարյան դրական ֆոնդը»՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերության տնօրինությամբ, բայց երբ գոլիցինյան օրենքով արգելվում է գրականությանը և մշակույթին նպաստելն ընդհանրապես, գումարի տնօրինությունը ստանձնում է Ս. Շահազիզը, որի մահվանից հետո (1907 թ.) ֆոնդը կազմալուծվում է։ Մոտ տասը տարվա այդ օգնությունը հայ գրողներին, անշուշտ կաթիլ էր նրանց կարիքների օվկիանոսում, բայց ֆոնդի գոյությունը մի խթան էր՝ ավելի ապահովված ընկերություն ստեղծելու համար[12]։

Անհրաժեշտ է նշել, որ ոչ մի հայ գրող այնքան չի զբաղվել գրական ընկերություն ստեղծելու գործով, որքան Թումանյանը։ Նրան հետաքրքրողը տվյալ դեպքում ո՞չ այնքան գրողին նյութապես ապահովելն էր, որքան գրողների, գրական գործիչների համատեղ գործակցությունը, գրական ասուլիսները, գրույցները, երեկույթները։

Մինչև հայտնի «Վերնատան» հիմնադրումը, Թումանյանի նախաձեռնությամբ փորձ է արվում կազմակերպել գրական երկու խմբակ. մեկի մեջ մտնելու էին Աղայանը, Պռոշյանը, Շիրվանզադեն, Մուրացանը, Փափազյանը և ուրիշներ, մյուսի մեջ՝ Փիլ. Վարդազարյանը, Տ. Հովհաննիսյանը, ինժեներ Հովհ. Քաջազնունին, բժիշկ Վահան Արծրունին, փաստաբան Բաբաջանյանը, իշխանուհի Մ. Թումանյանը, բժիշկ Ար. Զարդարյանը[13]։ Հավաքատեղին Թումանյանի բնակարանն էր։ Այս խմբակները մի քանի հավաքույթներից հետո դադարել են գոյություն ունենալուց, յուրովի նախապատրաստելով նախ «Վերնատունը», իսկ ավելի ուշ՝ նաև Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնումն ու գործունեությունը։

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվում է մի անտիպ վավերագիր ևս. դա Արասխանյանի ձեռքով գրված հրավիրա-

---

9 Թումանյանի՝ «Մուրճից» հեռանալու մանրամասնությունները տե՛ս Արամ Ինճիկյան, Հովհ. Թումանյան, Երևան, 1969, էջ 331—339, «Հովհ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 907։

10 Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, Թիֆլիս, 1911, էջ 122։

11 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. V, Երևան, 1947, էջ 118—119։

12 Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, էջ 122—126։ «Լազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի ծանոթագրություններում (էջ 487) Արասխանյանի նախաձեռնությունը, որին անդրադարձել է Շահազիզը իր 1893 թ. նոյեմբերի 23-ի նամակում, շփոթված է «Աբովյան—Նազարյան գրական ֆոնդիս ստեղծման հետ. վերջինս, ինչպես տեսանք, հիմնադրվել է 1898 թ.։

13 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. V, էջ 136, 192։

տոմս է՝ ուղղված բանաստեղծին։ Պարզվում է, որ 1909 թ. Արասխանյանը կրկին ձեռնարկում է «Գրականներին, դիտնականներին, մանկավարժներին օգնող հայոց ընկերություն» ստեղծելու գործը և օգոստոսի 16-ին տեղի ունենալիք հիմնադիր ժողովին հրավիրվում է նաև Հովհ. Թումանյանը։ Ժողովի ինը մասնակիցները պետք է քննեին ու ստորագրեին ընկերության՝ Արասխանյանի կազմած կանոնադրությունն ու նախագիծը և դարձյալ ներկայացնեին կառավարությանը[14]։ Մասնակիցների թվի սահմանափակ լինելն ուներ իր քաղաքական պատճառը։ Ռուսաստանում և Կովկասում տիրում էր Ստոլիպին-պուրիշկևիչյան ռեակցիան, որի զոհերից մեկն էլ Թումանյանն էր՝ այդ ժամանակ երաշխավորությամբ ազատված Մետեխի բանտից։

Նույն թանգարանի Արասխանյանի ֆոնդում պահվում են ընկերության կանոնադրության նախագծի ռուսերեն ձեռագիր երկու պատճենները և Արասխանյանի դիմումը՝ ուղղված Թիֆլիսի նահանգապետին, որով նա տեղեկացնում է նախագծի պատճենը հանձնելու և կազմողների ստորագրությունները նոտարով հաստատած լինելու մասին։

Այդ վավերագրից պարզվում է, որ Արասխանյանի հրավերը ստանալուց հետո Թումանյանը մասնակցել է օգոստոսի 16-ի ժողովին և ստորագրել կանոնադրության նախագծի տակ։ Արասխանյանից և Թումանյանից բացի ստորագրել են նաև Ղ. Աղայանը, Լեոն, Ս. Տիգրանյանը, ուսուցիչ Հովհ. Տեր-Միրաքյանը, նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը։ Ըստ երևույթին, կազմակերպչական շրջանը ունեցել է դժվարություններ, որովհետև նախագիծը ստորագրված է 1910 թ. ապրիլի 24-ին, իսկ Թիֆլիսի նահանգական վարչություն հասել է հուլիսի 7-ին[15]։ Ինչպես որոշակի երևում է անվանաթերթի վրա եղած նահանգական վարչության կնիքներից, նախագիծը հասել է ըստ պատկանելույն, բայց վերադարձվել է առանց հաստատման։ Դրա պատճառներից մեկը, կարծում ենք, Թումանյանի՝ դատի ենթակա և ժանդարմական վարչության հսկողության տակ լինելու հանգամանքն էր։

1912 թ. օգոստոսին, երբ պաշտոնապես հաստատվեց գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանի Թիֆլիսի հանձնաժողովի ներկայացրած Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրությունը, գրաքննչական խստությունները համեմատաբար թուլացել էին, բայց չնայած դրան Թումանյանի ստորագրությունը հիշյալ կանոնադրության տակ չկա։ Ճիշտ է Թումանյանը 1912 թ. մարտին Պետերբուրգի սենատի դատական նիստում ազատվել էր մեղադրանքից, այնուամենայնիվ, անունը մնացել էր պահնորդական բաժնի «անբարեհույս» քաղաքացիների ցուցակներում, մի հանգամանք, որը կարող էր արգելք հանդիսանալ կանոնադրության պաշտոնապես հաստատվելուն։ Թիֆլիսից հեռացած լինելով, Արասխանյանը այդ ժամանակ չէր մասնակցում հասարակական գործերին։ Նրա տարիների ջանքերի լուռ վկաները Թումանյանի մոտ պահվող վավերագրերն էին։

Գրողների ընկերության առաջնահերթ խնդիրներից մեկը գրական ֆոնդի ստեղծումն էր, որին ձեռնամուխ եղավ Թումանյանը։ Հայտնի են այդ մասին գրած նրա հոդվածները[16], հաստատված կանոնադրության ծրագիրը (1913,

14 ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ (լր. ց.), № 262 (4)։

15 Տե՛ս ԳԱԹ, Ավետիք Արասխանյանի ֆոնդ, № 23 (V)։

16 Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. V, էջ 193, 198, 340, 366, 397 և այլն։

մարտ), գրական ֆոնդի «Հրավերը», «Հայ ժողովրդի ընդհանրությանը և ազգային-հասարակական հիմնարկություններին» (1913, հոկտեմբեր)[17]։

1919 թ. մարտի 30-ին հրապարակած «Օգնություն հայոց գրականությանը» հոդվածում Թումանյանը հրաժարվում է իր գրվածքների հրատարակության համար Թիֆլիսի հայկական ակումբի ավագների խորհրդի հատկացրած գումարից (1500 ռ.), նվիրելով այն Գրողների ընկերության վարչությանը, որպեսզի դրանով հիմք դրվի գրողների օգնության գործին[18]։

Երեք ամիս հետո՝ հուլիսին, դիմելով նույն ընկերության վարչությանը, Թումանյանը մեծահոգաբար հրաժարվում է Հայաստանի կառավարության՝ հայ մտավորականությանը հատկացրած 100 000 ռուբլի նպաստից իրեն տրված 10 000 ռուբլուց, խնդրելով «էն էլ բաժանել ուրիշ կարիքավոր գրողների», իսկ իրեն օգնել «երկրորդ նվագի ստացողների հետ... Իմ դրությունը,— գրում է նա,— միանգամայն տարբերվում է իմ ընկեր գրողների դրությունից էն հանգամանքով, որ ես Գրողների ընկերության նախագահն եմ, ինձ են դիմում ամենքը և ես պարտավոր եմ հոգալու նախ և առաջ ուրիշների կարիքները»[19]։

Երևանի պետական արխիվում պահպանվում են Թումանյանի ձեռքով գրված վավերագրեր, որոնք պարզում են, թե ինչ ճանապարհով է այդ գումարը դրվել գրողների վարչության տրամադրության տակ։

Փաստաթղթերից մեկը՝ գրված 1919 թ. հունիսի 15-ին, ուղղված է Հայաստանի նախարարապետին։ Գրելով հայ մտավորականների կենսապայմանների մասին ընդհանրապես և «...էս օրերում, երբ ամեն պարեն ու պիտույք առասպելական գների է հասել և բարձրանում է շարունակ», Թումանյանը հիշեցնում է 1912 թ. Հայ գրողների ընկերության առաջին ընդհանուր ժողովում ընդունած որոշումը. «Երբեք չդիմել մասնավոր հանգանակության, էս կամ էն հարստին, այլ կարիք եղած ժամանակ դիմել ազգի ընդհանրությանը և կամ ազգային հաստատություններին»։ Հայաստանի կառավարության համար «հայ կուլտուրայի պաշտպանությունը առաջնակարգ հոգսերից պիտի լինի»,— պնդում է նա և խնդրում «...մի գումար հատկացնել Հայ գրողների ընկերությանը՝ էս նեղ օրերին օգնության հասնելու մեր գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին». գրության տակ ստորագրված է՝ «Նախագահ Հայ գրողների ընկերության՝ Հովհ. Թումանյան»[20]։

Նույն օրը Թումանյանն իր խնդիրը դարձնում է նաև անձնական նամակի նյութ և պաշտոնական գրության հետ Վրթ. Փափազյանի ձեռքով ուղարկում Երևան։ Թեպետ, ինչպես պարզվում է այդ նամակից, կառավարության ղեկավարները հատուկ զգուշացրել էին նրան՝ չդիմել իրենց գրողներին օգնելու խնդրով[21], բայց այս անգամ կառավարությունը չի մերժում Թումանյանի խնդիրքը և ուղարկում է 100 000 ռուբլի։

Վերոհիշյալ նամակում Թումանյանը անում է մի այլ առաջարկ և ուղար-

---

17 Թումանյանի թանգարան, 356/415, 356/417։

18 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, Երևան, 1951, էջ 415։

19 Նույն տեղում, հատ. V, էջ 442։

20 Թումանյանի թանգարան, ձեռագրերի լուսապատճենների բաժին, № 980։ Ինչպես այս նամակը, այնպես էլ հաջորդ փաստաթղթերը Երևանի պետական արխիվի ֆոնդերից հայտնաբերել է Թումանյանի թանգարանի աշխատակից Լուսիկ Թաշճյանը։

21 Նույն տեղում, № 981։

կում 1919 թ. հունիսի 2-ի պաշտոնական գրության հետ՝ «Ժողովի նախագահ Հովհ. Թումանյան» ստորագրությամբ[22]։

Նշելով առաջավոր մտավորականների՝ Թիֆլիսում տեղի ունեցած մի քանի ժողովների մասին, ժողովներ, որոնց նպատակն էր պաշտպանել ու զարդացնել ազգային մշակույթը, Թումանյանը հայտնում է մասնակիցների միահամուռ եզրակացությունը արտադպրոցական կրթության գործը ապահովելու վերաբերյալ։ Նշվում է, որ դրա համար անհրաժեշտ է Հայաստանի հանրային կրթության մինիստրությանը կից հիմնել մի փոխմինիստրություն և ընթացք տալ խնդրո առարկա գործին։ Իր անձնական նամակում Թումանյանը պաշտոնական գրության մեջ արված առաջարկությանը ավելացնում է ժողովում հայտնված մի այլ կարծիք ևս, որ, եթե կառավարությունը միջոցներ չունենա կամ գլանա, ապա Հայկազյան ընկերությունը կարելի է դարձնել պետությանը ենթակա մի հիմնարկություն[23]։

Ինչպես երևում է պաշտոնական գրության վրա եղած մակագրությունից, մի քանի օր հետո այն ուղարկվել է Հանրային կրթության մինիստրությանը՝ ի տնօրինություն[24]։

Թումանյանն, անկասկած, տեղյակ էր այդ ամենին, գիտեր, թե ինչ վիճակի մեջ է դպրոցական կրթությունը Երևանում, բայց, չնայած դրան, առաջարկում էր սկսել արտադպրոցական կրթության գործը՝ հայ աշխատավորների անգրագիտությունը վերացնելու նպատակով։ Տվյալ հարցում Թումանյանը առաջնորդվում է մի սկզբունքով, որի մասին նա 1917 թ. մայիսին հետևյալն է գրել.

«Հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեռ ու դառն ժամանակին...

Եվ սրա մեջ է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման»[25]։

Բոլորովին պատահական չէ, որ նույն 1917 թ. Թումանյանը խանդավառվել էր մի հետաքրքիր զուգադիպությամբ. այն ժամանակ, երբ ինքը ջանք չէր խնայում Հայկազյան ընկերությունը հիմնելու համար, Մոսկվայի Մեծ թատրոնում ճառով հանդես է գալիս Մաքսիմ Գորկին, որի խոսքերից բանաստեղծը թարգմանաբար մեջ է բերել հետևյալ հատվածը. «...եղած ազատությունը արտաքին է... հոգեպես դեռ ստրուկ ենք։ Հոգեկան ստրկությունից մեզ միայն գիտությունն է ազատելու»։ Նույն ճառում Գորկին առաջարկել է հիմնել գիտության ինստիտուտ՝ 1917 թ. փետրվարի 17-ի հիշատակին և «տեղն ու տեղը տվել է հասցեն,— շարունակում է Թումանյանը,— որ գործին օգնել ուզողները իրենց օգնությունը իրեն հասցնեն»[26]։

Հայ ժողովրդին հոգեկան ստրկությունից ազատելու նպատակն է եղել Թումանյանի բոլոր գործերի գաղափարական ելակետը։ Դրա ապացույցը գրողների ընկերություն, գրական ֆոնդ, հայկական համալսարան, ակադեմիա, Հայարտուն և այլ հաստատություններ ստեղծելու նրա անդուլ գործունեությունն է։

---

22 Թումանյանի թանգարան, ձեռագրերի լուսապատճենների բաժին, № 979։

23 Նույն տեղում, № 981։ Հիշատակված Հայկազյան ընկերությունը ստեղծվել է 1917 թ. Թիֆլիսում։ Նրա նպատակն էր հիմնել հայկական ակադեմիա և համալսարան, նյութապես ապահովել հայ մտավորականությանը։

24 Նույն տեղում, № 979։

25 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 397։

26 Նույն տեղում, էջ 367։

МАТЕРИАЛЫ ОБ ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОВАНЕСА ТУМАНЯНА

Л. М. КАРАПЕТЯН

(Резюме)

Статья посвящена неизвестным до настоящего времени фактам общественной деятельности Ованеса Туманяна по неопубликованным материалам из архивов г. Еревана. Эти материалы знакомят нас, в частности, с историей созданных в 1912 г. Кавказского общества армянских писателей и Литературного фонда, связанной с деятельостью известного экономиста и журналиста Аветика Арасханяна и с неустанными усилиями Туманяна облегчить жизнь армянских писателей в годы первой мировой войны. Новые материалы обогащают летопись жизни и творчества поэта.